## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 26.12.18թ. կնքված N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-19/1 զնման պայմանագրի

ք. Երևան 16. 01. 2019թ.

ՀՀ դատախազությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Նավասարդյանի, որը գործում է ՀՀ դատախազության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Գ. Գրիգորյանի, որը գործում է՝ ընկերության կանոնադրության, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված թիվ ԱՊՌ 0009 ապահովագրական լիցենզիայի հիման վրա մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 26.12.2018թ. կնքված ՀԳԴ-ՄԱԾՁԲ-19/1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.13 կետը, ինչպես նաև այն, որ ֆինանսական միջոցներ նախատեսվել են, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով Պայմանագրի 4.2 կետի պահանջները՝ հաստատել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ ապահովագրական ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություն) վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության (Պայմանագրի հավելված 3) հիման վրա՝ սույն Համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2019թ.-ի դեկտեմբերի 20-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և գործում է մինչև կողմերի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

**ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| Պ ա տ վ ի ր ա տ ու | Կ ա տ ա ր ո ղ |
|---|---|
| ՀՀ դատախազություն | Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ |
| ք. Երևան Վ.Սարգսյան 5. | ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1 |
| ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011180081 | Հ/Հ 1570003731650100 |
| ՀՎՀՀ 02506634 | ՀՎՀՀ 02589581 |
| ................................ (ստորագրություն) | ................................ (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
«16» հունվարի 2019թ. կնքված N 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| | | | Ծառայության | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝, այդ թվում** | | | | |
| | | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Ընդամենը |
| 1 | 66511170/505 | ԱՊՊԱ ծառայություն | 2346000.0 | 2346000.0 | 2346000.0 | 2346000.0 | **2346000.0** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**Պատվիրատու**

ՀՀ դատախազություն
ք. Երևան Վ.Սարգսյան 5.
ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

.............................................
(ստորագրություն)

Կ.Տ

**Կատարող**

Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ
ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581

.............................................
(ստորագրություն)

Կ.Տ